քանդակաւ փորեալ է վիթխարի դլուխ եղին մանեակ 'ի բերանի, յորմէ լուծք շղթայից արձակին և կապէն առիւծունս կրկին և արծուի թեւատարած սաւառնէ 'ի վերոյ նոցա՝ մագլցի ունելով զգառն. 'ի հարաւային որման կայ արձանագիր յիշատակի Պռոշայ մեծի իշխանի շինողի մատրանն. ծաղկաձևք և խաչաձարդք պճնեն զերեսս որմոցն: Համանման սմին են և Բ և Գ մատրունքն յարևելից նորա, ունելով և սոցա զմուտսն 'ի մեծէ դաւիթէն, առաւելեալք զարդուցն մասամբ. իսկ Դն որ 'ի վերայ սոցա կայ՝ ունի մուտս արտաքոյ յարևմտեան հարաւոյ, 'ի նմին վիմէ, և է քառակուսի իբրև 20 ոտնաչափ առ կողմն. չորիս ունի սիւնս սուրս և գեղեցիկս, յորոց կամարքք ձգեալք ամբառնան գմբէթ սրաձև, յորում լուսամուտ բոլորշի, և աստի կարծի սկիզբն արտաքեալ փորուածոյ մատրանն և տակաւ 'ի վայր խաղացեալ որպէս 'ի բոլս. կայ 'ի սմա բեմ և սեղան. 'ի վերնախարսխի միոյ 'ի սեանցն գրեալ է արձանագիր Պապաքայ որդւոյ Պռոշայ և կնոջ նորա Ռոզուքանայ, որ յամին 1288 ետուն զայն փորել. կան և այլ մատրունք փոքրկունք փորեալք 'ի բաղում կողմանս քարաղերինն. մասամբ վիմափորք են և սենեակք մենաստանին որ 'ի հարաւոյ և յելից եկեղեցեացն. 'ի տաճարի մեծի եկեղեցւոյն պահէր գեղարդն սուրբ՝ որ այժմս գանձեալ պահի յԷջմիածին: — Ներսէս ոստիկան Արաբացի աւերեաց նախ զտեղիս զայս յամին 923, և ապա սասանուԹիւնն 1679 ամին, և յետոյ Լեզկիք. և առ մեօք կրկին նորոգեալ յամին 1834, ոչ սակաւ անդրէն վտանգեցաւ և խախտեցաւ 'ի մեծէ սասանուԹենէն Արարատայ յամին 1840. սակաւք ոմանք 'ի Ճգնաւորաց Սեանայ պահէն այժմ զզարմանալին մենաստանս: — Որում նման և պայծառագոյն ևս էր Հայոց Ռաս կամ Հաստոց Ռաս՝ յարևելից հարաւոյ սորա և յելից գետոյն, նորոգ չինեալ Ամենափրկիչ եկեղեցեաւն 'ի Գրիգորէ մագիստրոսէ՝ յամին 1013, որ նոյնպէս կործանեցաւ յամին 1679, և Թէպէտ ձեռն արկին 'ի նորոգութիւն, այլ լքեալ մընաց: Մերձ երկոցուն սոցա 'ի նոյն լերինս էր և Առջոյ վանք՝ առ յիշատակէ սրբոց Հռիփսիմեանց, հաստատեալ 'ի Լուսաւորչէն: Մերձ նմին Թուի և Ուլաբէրդ գիւղ, բնակեալ այժմ 'ի սակաւուց մահմետականաց, յորում անձաւախիտ քարայքք են վիմափորք, այլ ոչ է քննեալ տեղւոյս:

142. ՇԱՐՈՒՐ գաւառ 'ի հարաւոյ կայ Զէնկիպազարայ և յարևելից Տարալաղազայ, Երասխաւ սահմանեալ յարևմտից կողմանէ, և Արբա գետով օժանդակաւ Նորուն 'ի հարաւոյ. արևելեան մասն նորա լեռնավայր է, արևմտակողմն դաշտագետին, և մասն է գաւառացն Այրարատայ՝ ԴՈՒՌԱՑ ԴԱՀՏՈՒ և ՇԱՐՈՒՐԱՑ: Հիւսիսակողմնն կոչի ԱՎՏԻՊԱԶԱՐ, յանուն Ավէտ վտակի՝ որ Թափի յԵրասխ. ընդ մէջ նորա և Արբայի խաղայ այլ վտակ Զանախճի կոչեցեալ: Ցերկոսին վիճակս գաւառիս 70 գեօղք են, յորոց բնակիչք՝ Հայք 3000 միայն, այլքն Թաթարք: Գլխաւորք 'ի գեօղեանն են Վէրի, յորում 100 տուն Հայոց և 130 Թաթարաց: — Տեվեան. 'ի սմա ևս 100 երդք Հայոց. — Սարարի, 140 տամբք Թաթարաց և Պարսից: Ի բնիկն Շարուր գլխաւոր գեօղ է Պաշ-Նորաշեն իբր 100 հայ գերդաստանօք և 25 այլազգեօք, առ Արբայ գետով. — Եկնիձ, Խանլիար, Վայխիր? և այլն: Քաղաք կամ շէն նշանաւոր ոչ յիշատակի այժմ 'ի գաւառիս, այլ հարկ էր 'ի հնումն բարգաւաճ յոյժ լինել նմին, մերձ գոլով Յոստանն ալքունի և յաւագ լեառնն Մասիս. և Թերևս գացին մնացուածք շինուածոց 'ի 40 և յաւելի գեօղսն ամայիս, արտաքոյ եօԹանասիցն բնակեցելոց:

143. ԿԷՕՌ-ՁԱՑ գաւառ ընդարձակ յարևելից կայ չորիցն նախագրելոց, և բոլորի զծովական Գեղամայ, տարածեալ ընդ հիւսիսի և ընդ հարաւ և ընդ արևմուտս. հիւսիսակողմնն ունի զԵՐՈՑՈՐ, զՆԻԳ և զԾԱՂԿՈՒՆԻՍ կամ ՎԱՐԱԳՆՈՒՆԻՍ գաւառս Այրարատայ, արևմտակողմն զՄԱԶԱԶ, հարաւակողմն և արևելեան անձուկ եզր զԴԵՂԱՔՈՒՆԻ գաւառ Սիւնեաց. մասամբ Վայոց Ձորոյ: Ձարգիս արևմտեան հիւսիսային մասն գաւառիս ԵՊԱՐԱՆ կոչի, յորում 40 գեօղք են. մասն վիճակիս յայնկոյս Քասաղայ կայ ցԱրագած լեառն, հիւսիսային և միջին կողմն ՏԱՐԱՁԻՁԱԿ կոչի, որ Թարգմանի Ծաղկունեաց Ձոր, և կոչի իսկ այսպէս 'ի յիշատակարանս. 'ի սմա 37 գեօղք են. հարաւակողմնն է բուն ԿԷՕՌ-ՁԱՑ, յորում 60 գեօղք հայաբնակք 9000 ոգւով: — Համբէն գաւառն կոհակացեալ է լերամբք և ձորովք, և կենդրոն իմն Թուի ահեղ հրաբխից, և 'ի նոցանէ գոգացեալ տաշտաձև Լիճն Սևանայ, որ է Ծով Գեղամայ կամ Գեղամոնեայ ըստ նախնեաց, կապոյտ ծով կոչեցեալ յայլազգեաց, ԿԷՕՔԼՅ կամ ԿԷՕՔՆ ԳԵՆԻՔ, և Տերէպերէրն՝ 'ի Պարսից, այսինքն Գեղեցիկ ծով: Ի հիւսիսոյ նորա ձգին Էշեկ-մեյտան լերինք և անջրպետեն յելից կուսէ զնահանգն Գանձակայ. յարևմտից կուսէ ամբառնան Ի-ԼԻԷԷԼԷՐ (Երեքգագաթունք) կոնաձևք հրաբխիք, և Ակմանկան լերինք բարձունք, որ են Գեղամայ լերինք. 'ի մոլոր կուսէ նոցին՝ Քէօթանկ, և Հատիս՝ որ է Շամիրամայ լեառն հանգէպ լերինն Արայի. յարևմտեանն հարաւակողմն՝ Նալ-Թէփէ և Աք-տաղ որ են լերինք Գեղայ, և Աբգրլայ-սար՝ այսպէս կոչեցեալ յանուն սրբազանի ուրուք, և այլ գագաթունք բարձունք բիւր ոտնաչափ և աւելի. յարևելից կուսէ Քունկուր, Քիլիսէլի, Տէլիքթէփէ, և այլն: Ի լերանց սասի 35 գեօք և վտակք մանունք իջանեն 'ի ծովակն, կէսք առանձինն և կէսք միասին անկեալ, որպիսիք են գետն Զիպուքլուի 'ի հիւսիսոյ, Գէրիկ և Դրանդիկ 'ի հիւսիսոյ արևելից. իսկ յարևելից կուսէ վտակք մանունք իջանեն զի լերինքն հուպ կան 'ի ծովակն. 'ի հարաւոյ և յարևմտից հզրագոյնք իջանեն գետակք, որպէս Մաղրս գետն՝ օժանդակեալ 'ի յոլովից վտակաց, գետն Մաքենոց, Շղուաքայ, Ձագայ, Կոթայ, Կոդկաքէր որ յԱբգրլայ սարէն իջանէ, և այլն: Իսկ 'ի ծովէն մի միայն առու ելանէ յարևմտից հիւսիսոյ և հոսէ 'ի Հրազդան գետ, որոյ և Թեւ մի համարի: Եւ է ծովակն 6000' բարձր յերեսաց Սեաւ ծովու, ունելով 40 մղոն ընդ երկայնն և 20 ընդ լայնն 'ի հարաւոյ կողմանէ, իսկ 'ի հիւսիսոյ 10 մղոն միայն, անձկագոյն ևս է 'ի միջակողմն՝ քարուտ սարաւանդից յառաջե-